«Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և ««Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծեր

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2011 թվականի նոյեմբերի 28-ի Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել նոր 31.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**31.1 Ընդերքօգտագործման իրավունքի վերաբերյալ ակտերի ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենսգրքով նախատեսված ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման, փոփոխման, փոխանցման և դադարեցման վերաբերյալ վարչական և այլ ակտերը ուժի մեջ են մտնում դրանց վերաբերյալ համապատասխան թեմատիկ տարածական տվյալների շերտի և մետատվյալների՝ ազգային գեոպորտալում ինտեգրման պահից։»։

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Հանրապետության նախագահ Վ. Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան, 2026 թ?

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. 2002 թվականի հունիսի 4-ի Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածի 1-ին չհամարակալված պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ջրօգտագործման թույլտվությունը վավեր է, եթե այն ստորագրված է Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարի կողմից, գրանցված է պետական ջրային կադաստրում, և դրա վերաբերյալ համապատասխան թեմատիկ տարածական տվյալների շերտը և մետատվյալները ինտեգրված են ազգային գեոպորտալում։»։

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Հանրապետության նախագահ Վ. Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան, 2026 թ?

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Քաղաքաշինության մասին» 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-217 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 24.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**24.1 Շինարարության և քանդման թույլտվությունների ուժի մեջ մտնելը**

1. Սույն օրենքով նախատեսված շինարարության և քանդման թույլտվությունների, ինչպես նաև դրանց փոփոխման, երկարաձգման, դադարեցման վերաբերյալ վարչական ակտերը ուժի մեջ են մտնում դրանց վերաբերյալ համապատասխան թեմատիկ տարածական տվյալների շերտի և

մետատվյալների՝ ազգային գեոպորտալում ինտեգրման պահից։»։

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից։

Հանրապետության նախագահ Վ. Խաչատուրյան

ՀՕ- -Ն

Երևան, 2026 թ?